



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-19238**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2020 թվականի հուլիսի 29-ի թիվ 91-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԻՎ ԿԳ/71-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿ ՍԵՂՐԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի և Կարեն Մեծլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,  
քննության առնելով փաստաբան Հայկ Սեղրակյանին (արտոնագիր թիվ 1265) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Ֆարահնազ Էֆթեխարին (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է, որ 16.01.2019 թվականին փաստաբան Հայկ Սեղրակյանի հետ կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր, որի համաձայն փաստաբանը պետք է իրականացներ Դիմողի ամուսնու՝ Սետրակ Էբրահիմի շահերի պաշտպանություն ՀՀ ՊԵԿ քննչական բաժնում քննվող քրեական գործով նախաքննության ընթացքում, ինչպես նաև նախաքննության ավարտից հետո: Ըստ Դիմողի՝ փաստաբանը, ստանալով պայմանագրով սահմանված 1.200.000 ՀՀ դրամ ծառայության վճարը, հավաստիացրել է, թե կարող է այնպես անել, որ իր ամուսինն ազատ արձակվի: Մինչդեռ, փաստաբանն իր ամուսնու շահերը չի ներկայացրել ոչ մի պետական ատյանում, իսկ երբ ինքը դիմել է՝ խնդրելով վերադարձնել վճարված գումարը, վերջինս հրաժարվել է: Դիմողը նշել է, որ հետագայում ինքը փաստաբանական ծառայությունից հրաժարվել է և խնդրել է փաստաբանին վճարված գումարը վերադարձնել, սակայն փաստաբանը մինչ դիմում ներկայացնելու օրը նշված գումարը չի վերադարձրել:

Դիմողը խնդրել է «հարուցել քրեական գործ» և իր կողմից վճարված գումարները վերադարձնել:

Դիմումին կից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել է նաև փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրի պատճենը:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 19.11.2019թ. թիվ 475-Ա/ԿԳ-19238 որոշմամբ փաստաբան Հայկ Սեդրակյանի (արտոնագիր թիվ 1265) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրը**) 3.1.8 (նույն կարգավորումը նախատեսված է Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրի (**այսուհետ նաև՝ Նոր կանոնագիրը**) 3.1.8 ենթակետով) և 3.1.10 (նույն կարգավորումը նախատեսված է Նոր Կանոնագրի 3.1.10 ենթակետով) ենթակետերի **խախտման հարկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-19238):**

25.11.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հայկ Պետրոսյանին:

## **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

Խորհրդի նիստին ներկայացել է Դիմողի ներկայացուցիչ Աբդուլմաջիդ Ջհադին, ով հանդես է եկել Դիմողի կողմից տրված լիազորագրի հիման վրա: Վերջինս պնդել է Դիմումով հայտնաձև այն մասին, որ Դիմողը պայմանագիր է կնքել փաստաբանի հետ, որով վերջինս պարտավորվել է իրականացնել Դիմողի ամուսնու շահերի պաշտպանությունը քրեական գործի շրջանակներում և երաշխավորել է, որ կկարողանա նրա ամուսնուն ազատ արձակել: Պայմանագրով հոնորար է սահմանվել է 5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք դրամ գումարը: Դիմողը պայմանագրի կնքման պահին փաստաբանին վճարել 2600 (երկու հազար վեց հարյուր) ԱՄՆ դոլար, ինչպես նաև պարտավորվել է մնացած գումարը վճարել ավելի ուշ: Պայմանագրի կնքումից մի քանի ժամ անց Դիմողը վերադարձել է փաստաբանի գրասենյակ պայմանագիրը լուծելու և վճարված գումարը ետ վերադարձնելու նպատակով, սակայն այդպես էլ չի կարողացել գտնել վերջինիս: Դիմողի ներկայացուցիչ բոլոր զանգերին ի պատասխան, փաստաբանն ասել է, որ չի պատրաստվում որևիցե գումար վերադարձնել, չնայած որ փաստացի ծառայություն չի մատուցել, ինչպես նաև հավելել է, որ ինքը Հայաստանի Հանրապետությունում չի գտնվում:

### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

Փաստաբան Հայկ Սեդրակյանը խորհրդի նիստին չի ներկայացել և չի տվել բացատրություն:

**Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

**4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.**

17.01.2020թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Հայկ Պետրոսյանը կազմել է եզրակացություն:

03.02.2020թ կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 29.07.2020թ. ժամը՝ 18:50-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

**Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝**

- Դիմողի և փաստաբանի միջև 16.01.2019թ. կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որով փաստաբանը պարտավորվել է իրականացնել Դիմողի ամուսնու՝ Սետրակ Էբրահիմի շահերի պաշտպանությունը ՀՀ ՊԵԿ քննչական բաժնում քննվող քրեական գործով նախաքննության ընթացքում՝ մինչև նախաքննության ավարտը, իսկ Դիմողը պարտավորվել է վճարել փաստաբանի հոնորար հանդիսացող 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարը պայմանագրի կնքման պահին: Սույն փաստը հաստատված է համարվում 16.01.2019թ. պայմանագրի պատճենով:

- Դիմողը 05.11.2019 թվականին լիազորել է Աբդուլմաջիդ Զահաբիին՝ իր փոխարեն փաստաբանից ստանալու, վերջինիս կողմից վճարված 2600 (երկու հազար վեց հարյուր) ԱՄՆ դոլար գումարը: Սույն փաստը հաստատված է համարվում 05.11.2019թ. լիազորագրի պատճենով:

- Փաստաբանը 2019թ. մարտի 3-ին մեկնել է Մոսկվա, այնտեղից էլ՝ ԱՄՆ: Սույն փաստը հաստատվում է ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի պետի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ:

**Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 21.07.2020թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հայկ Սեդրակյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

**6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

*Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.*

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել է Կանոնագրքի 3.1.8 և 3.1.10 ենթակետերով սահմանված վարքագծի կանոնների առերևույթ խախտման հիմքով:

➤ **Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման մասով.**

*Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Նշված կանոնը երաշխավորում է վստահորդի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ առանց փաստաբանի անձի հետ կապված խոչընդոտների: Կանոնագիրքը սպառիչ պատճառներ չի նախատեսել, այլ ընդգծել է պատճառներից հիմնականը՝ փաստաբանի զբաղվածությունը:

Փաստաբաններն իրենց զբաղվածությունը որոշում են սեփական հայեցողությամբ, սակայն պետք է հաշվի առնեն նաև ստանձնող գործը վարելու իրենց սահմանափակ հնարավորությունները: Փաստաբանների պալատը չի սահմանել չափանիշներ, թե յուրաքանչյուր փաստաբան որքան գործ կարող է վարել մեկ ամսվա կամ մեկ տարվա ընթացքում: Կարգապահական յուրաքանչյուր գործ քննելիս, Փաստաբանների պալատի խորհուրդը կարող է հաշվի առնել փաստաբանի փաստացի զբաղվածությունը, այլ գործընկերների, կամ օգնականների (աշխատակիցների) առկայությունը և այլ ուշագրավ հանգամանքներ:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 3.1.8 ենթակետի կիրառման իմաստով այլ պատճառներ կարող են լինել փաստաբանի մեկնումն այլ երկիր, գործուղումը, ուսումնառությունը, այլ աշխատանքի անցնելը, որոնք կարող էին խոչընդոտել վստահորդին իրավաբանական օգնության տրամադրումը:

Պալատի խորհուրդն արձանագրում է նաև, որ Կանոնագրքի 3.1.8 ենթակետում նշված խոչընդոտող պատճառները փաստաբանի համար պետք է կանխատեսելի լինեն հանձնարարությունը ստանձնելու փուլում: Եթե փաստաբանը

հանձնարարությունը ստանձնելուց հետո է տեղեկացել գործը վարելու անհնարինության կամ դժվարությունների մասին և դրանով իսկ պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել, ապա փաստաբանի վարքագիծը ենթակա է որակման այլ Փաստաբանի վարքագծի այլ կանոնով:

Տվյալ պարագայում գործի նյութերով հաստատված է համարում այն փաստը, որ փաստաբանի և Դիմողի միջև կնքված 16.01.2019թ. պայմանագրով փաստաբանը պարտավորվել է Դիմողին մատուցել իրավաբանական ծառայություններ, այդ թվում՝ ներկայացնել վերջինիս ամուսնու շահերը նախաքննության ընթացքում և մինչև նախաքննության ավարտը:

Գործի նյութերով հաստատվում է նաև այն փաստը, որ Փաստաբանը 2019թ. մարտի 3-ին մեկնել է Մոսկվա, այնտեղից էլ՝ ԱՄՆ:

Հաշվի առնելով, ԱՄՆ վիզաների ռեժիմի, տոմսերի ամրագրման ժամանակատար բնույթը, ինչպես նաև Փաստաբանի ԱՄՆ մշտական բնակությանը մեկնելու հանգամանքը, նման պայմաններում Պալատի խորհուրդը գտնում է, որ Փաստաբանը Պայմանագիրը կնքելիս գիտեր կամ պետք է իմանար, ԱՄՆ մեկնելու մասին, հետևաբար ի սկզբանե չպետք է ընդուներ իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը, քանի որ արտերկիր մեկնելու պատճառով չէր կարողանալու ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Վերոգրյալի հաշվառմամբ արձանագրվում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 3.1.8 ենթակետով սահմանված կանոնի խախտում:

Նոր Կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետով սահմանված կանոնը նույնությամբ սահմանված է Նոր Կանոնագրքի 3.1.8 ենթակետով:

➤ **Կանոնագրքի 3.1.10 ենթակետի խախտման մասով.**

**Կանոնագրքի 3.1.10 ենթակետի համաձայն՝** փաստաբանն իր մասնագիտական պարտավորությունների բարեխիղճ և որակյալ կատարումից բացի, այլ երաշխավորություն չի կարող տալ, մասնավորապես չի կարող երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից, երբ այդ արդյունքը կախված է դատավորի կամ վարույթն իրականացնող մարմնի որոշումից: Փաստաբանի կողմից քաղաքացիական, քրեական կամ վարչական գործով վստահորդի օգտին դատական ակտի կայացման խոստում տալը, ինչպես նաև քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից վստահորդի օգտին վերջնական որոշում կայացման խոստում տալը, հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական

խախտում:

**Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝** Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հոգուր Պատասխանողի:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի վարքագծում առկա չէ վերոնշյալ կանոնով որակված արարք, քանի որ Դիմողի կողմից որևէ կերպ չհիմնավորվեց փաստաբանի կողմից գործի ելքի հետ կապված երաշխիքի տրամադրման փաստը:

Ավելին՝ Դիմողի կողմից ներկայացված պայմանագրով հստակ սահմանված է, որ փաստաբանը որևէ երաշխիք չի տալիս գործի ելքի առնչությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ արձանագրվում է, որ Փաստաբանի վարքագծում Կանոնագրքի 3.1.10 ենթակետի խախտման փաստը չի հաստատվել:

### **Կարգապահական տույժի ընտրությունը**

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

**Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

**Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Հայկ Սեդրակյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի

տեսակը, միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Հայկ Սեդրակյանին (արտոնագիր թիվ 1265) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման համար:**

**2. Փաստաբան Հայկ Սեդրակյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:**

**3. Փաստաբան Հայկ Սեդրակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.10 ենթակետի մասով կարճել:**

**4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Մելանյա Առուստամյան

29 հուլիսի 2020թ.  
թիվ ԿԳ/71-Ա  
ք.Երևան